

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆԿԱՆՈՆ ԵՎ ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՅՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

### ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գրական լեզուն ձևավորվում է ընդհանուր խոսակցական լեզվի հիմքի վրա: Գրական լեզվի գրավոր և բանավոր խոսակցական տարբերակներում ընդհանրական դարձած և գործող լեզվական կանոնների շրջանակներում մշակված օրինաչափությունները որոշակի ժամանակահատվածում ամրապնդվում են լեզվական համակարգում, դառնում լեզվական կանոն: «Լեզվի բոլոր իրողությունները,- գրում է Մ. Աբեղյանը,- շարունակ ենթակա են ակամա և անգիտակից փոփոխությունների: Սրա պատճառը լեզվի սովորական գործածությունն է: Այստեղ չկա որևէ դիտավորություն, ուրիշ նպատակ, բացի վայրկյանի կարիքից՝ ցանկությունները և մտքերը հասկանալի դարձնելու դիմացինին: Ահա այս սովորական կիրառության ժամանակ էլ ծագում են լեզվական նոր ձևերը, կամ փոխվում են հիները: Եվ այդ նոր լեզվական իրակությունների առավել կամ պակաս նպատակահարմարությունը, հարմար լինելը որոշվում է նրանց երկար պահպանությամբ կամ կորստով»<sup>1</sup>:

Գրական հայերենի զարգացմանը ուղեկցող տեղաշարժերը, իհարկե, առավել կամ պակաս չափով արձանագրված են լեզվի տարբեր մակարդակներում: Ընդունված է ասել, որ ամենից արագ փոփոխվող և տեղաշարժերով հարուստ հատվածը բառապաշարն է: Դա այդպես է. փոփոխություններ ամենից ավելի նկատելի են բառային մակարդակում՝ բառի իմաստային կառուցվածքի զարգացում, բառակազմական հնարավորությունների ընդլայնում, փոխառություններ ու բառապատճենումներ, տեղաշարժեր բառագործածության մեջ և այլն: Արտասանական համակարգում տեղաշարժերը նկատելի են ժամանակի ավելի մեծ հատվածում՝ ձայնավորների արտասանության փոփոխություն, ձայնավորական զուգորդումներ, բառամիջում և բառավերջում ձայնեղ պայթական բաղաձայնների արտասանական տեղաշարժեր, հարաշեշտության առանձին դրսևորումներ և այլն<sup>2</sup>:

Լեզվի քերականական համակարգը այս իմաստով ավելի կայուն է: Շարահյուսության մեջ տեղաշարժեր են արձանագրվում ժամանակի ավելի մեծ հատվածներում: Շարժուն է խնդրառության ոլորտը:

Գործուն են ձևաբանական համակարգի առանձին բաղադրիչներ: Դրանք հատկապես այն իրակություններն են, որոնք խոսքում ունեն գործածության մեծ հաճախականություն: Վերջին շրջանում ամրագրված կամ

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Երկեր, Զ հատոր, Եր., 1974, էջ 15-16:

<sup>2</sup> Տե՛ս Թ. Ղարաբյուրյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Եր., 1974:

կանոնակարգված իրակություններից է, օրինակ, **ե** խոնարհման աններածանց բայերի նաև ներկայի հիմքից հրամայականի հոգնակիի կազմությունը (**գր+ե՛ք, երգ+ե՛ք, կանգն+ե՛ք**, փոխ.՝ **գրեց+ե՛ք, երգեց+ե՛ք, կանգնեց+ե՛ք**), որ մի քանի տասնամյակ առաջ հազվադեպ էր հանդիպում և համարվում էր սխալ, այժմ «մեծ կիրառություն ունենալու պատճառով» այլևս սխալ չի համարվում<sup>3</sup>:

Բայի խոնարհման հարացույցի՝ տեղաշարժ-փոփոխություններով աչքի ընկնող բաղադրիչներից են սուկածանցավոր և պատճառական բայերի արգելական հրամայականների կազմությունը, **ա** խոնարհման աններածանց բայերի հոգնակի արգելականը, անկանոն և պակասավոր բայերի խոնարհումը, **չ** ներածանցով բայերի անցյալ կատարյալի կազմությունը<sup>4</sup>:

**Անկանոն բայեր:** **ե** խոնարհման աններածանց բայեր՝ **ասել, բերել, գարկել, ուտել, բացել:**

**Ասել:** Հայտնի է, որ այս բայի անցյալ կատարյալը, ի տարբերություն **ե** խոնարհման աններածանց բայերի, կազմվում է ոչ թե **-եց**, այլ **-աց** բաղադրիչով՝ ոչ թե **ասեց** (ինչպես՝ **գրեց, խոսեց**), այլ **ասաց**: Ըստ այդմ՝ անցյալ կատարյալի համար ունենում ենք՝ *ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին:* **եց**-ով «կանոնական» ձևերը՝ *ասեցի, ասեցիր, ասեց, ասեցինք, ասեցիք, ասեցին,* խոսակցական են, որ երբեմն հանդիպում են նաև գրավոր խոսքում: Այն կարծիքը, որ վերջիններս գրական լեզվում արդեն կարող են դրվել առաջինների կողքին՝ իբրև զուգաձևեր, համոզիչ չէ, քանի որ առաջինները բացարձակապես գերիշխող են գրական և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքում: Անցյալ կատարյալն ունի նաև խոսակցական զուգաձևեր՝ *ասի, ասիր, ասինք, ասիք, ասին:* **Ա** խոնարհման աններածանց բայերի համաբանությամբ կազմվող հոգնակի հրամայականի զուգահեռ բայաձևերից՝ *ասացե՛ք/ասե՛ք*, գործածական է երկրորդ՝ կանոնավոր կազմությունը: Այդ են վկայում հարցման արդյունքները. ԵՊՀ առաջին կուրսի՝ հարցման ենթարկված **60** ուսանողներից այդ բայաձևը իրենց կողմից գործածական են համարել **52**-ը, մյուսները՝ **8**-ը, գործածական են համարել կա՛ն առաջին կազմությունը (**5**-ը), կա՛ն երկուսը միաժամանակ (**3**-ը):

**Ասել** բայի արգելականն է *մի՛ ասա, մի՛ ասեք*: Բարբառային են կան հնացած *ասավ, ասիր, մի՛ ասիր, ասեցե՛ք, մի՛ ասեցեք, մի՛ք ասի*: Անգործածական է նաև *մի՛ ասացեք* կազմությունը<sup>5</sup>:

<sup>3</sup> Կենդանի գրական լեզվում դրանք գործածության ավելի մեծ հաճախականություն ունեն, իսկ գրաբարում ներածանցավոր առանձին բայերի (**կառուցանել, մատուցանել, հատուցանել**) հրամայականի անցյալի հիմքից կազմությունները խիստ անբարեհունչ են և անգործածական, ինչպես՝ **կառուցեց+եք, մատուցեց+եք, հատուցեց+եք**, փոխ.՝ **կառուց+եք, մատուց+եք, հատուց+եք**:

<sup>4</sup> Մեր ընդհանրացումները հիմնվում են ինչպես գրավոր և բանավոր գրական խոսքի դիտարկումների, այնպես էլ քննարկվող քերականական իրողությունների վերաբերյալ կատարված հարցման արդյունքների վրա: Հարցման են ենթարկվել ԵՊՀ միջազգային հարաբ. ֆակ. առաջին կուրսի 60 և բանասիրութ. ֆակ. մագիստրատուրայի 20 ուսանողներ: Գրական լեզվին տիրապետող համեմատաբար ավագ սերնդի (60-70 տարեկան) ներկայացուցիչները ավելի հակված են դեպի ավանդական կազմությունները:

<sup>5</sup> Դասագրքերում չարձանագրված այս կազմությունը իբրև գործածվող ձև է նշվում այլ աշխատանքներում (տե՛ս **Ա. Մարգարյան**, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Եր., 2004, էջ 470):

**Քերել, զարկել:** Ըստ հարցման արդյունքների՝ ավելի գործածական են այս բայերի անցյալ կատարյալի՝ աններածանց բայերին բնորոշ **-եց** մասնիկով բաղադրված **բերեց-** և **զարկեց-** հիմքերից կանոնական կազմությունները՝ *բերեցի, բերեցիր, զարկեցի, զարկեցիր* և այլն, արմատական **բեր-** և **զարկ-** հիմքերից զուգածները՝ *բերի, բերիր, զարկի, զարկիր* և այլն, ընկալվում են իբրև ընդգծված խոսակցական երանգ ունեցող կազմություններ: **Քերել** բայի հոգնակի հրամայականը չունի զուգածություն. **բերեցե՛ք**-ը սխալ կազմություն է, իսկ **զարկել** բայի հոգնակի հրամայականի զուգածներից՝ *զարկե՛ք//զարկեցե՛ք*, գործածության մեջ ակնհայտորեն գերակշռող է արմատական հիմքով կազմությունը՝ **զարկե՛ք**, ինչպես **է** խոնարհան աններածանց բայերի դեպքում է: **Քերել** բայի համար ունենք արգելական՝ *մի՛ բեր, մի՛ բերեք* գործածական կազմությունները, իսկ **զարկել** բայի համար եզակի հրամայականի *մի՛ զարկ//մի՛ զարկիր* զուգածները, որոնցից առաջինը գործածականությամբ ակնհայտորեն զիջում է երկրորդին. հարցվածների (բանաս. ֆակ. մագիստրատուրայի 20 ուսանողներ) ճնշող մեծամասնությունը՝ **19**-ը **1**-ի հարաբերությամբ նախապատվությունը տվել է երկրորդին՝ *մի՛ զարկիր*: Ի դեպ, **զարկել** բայի հետ կապված պետք է նշել մի կարևոր առանձնահատկություն ևս. այլ հարցաթերթի հարցման արդյունքներով, որում հարցման առարկան անկանոն և պակասավոր բայերի հոմանշային տարբերակներն են՝ *զարկել - խփել, գիտենալ - իմանալ, կենալ - մնալ*, հարցվածների բացարձակ մեծամասնությունը և՛ գրավոր, և՛ բանավոր խոսքում իր կողմից գործածական է համարել **խփել** տարբերակը: Այսինքն՝ համապատասխանաբար շատ ավելի գործածական են ոչ թե **զարկել** բայի, այլ **խփել**-ի խոնարհման ձևերը՝ *խփեցի, խփեցիր, խփենք, խփելու են, մի՛ խփիր, մի՛ խփեք* և այլն:

**Ուտել:** Այս բայի արգելական հրամայականի իբրև զուգահեռ կազմություններ են նշվում *մի՛ կեր//մի՛ ուտի(ր), մի՛ կերեք//մի՛ ուտեք* ձևերը, ընդ որում, եզակիի **ր**-ով ձևը և հոգնակի երկրորդը կանոնավոր են: Հարցվածներից բոլոր **60**-ն էլ *մի՛ կերեք//մի՛ ուտեք* զուգածներից գործածական են համարել առաջինը՝ անկանոն **մի կերեք** ձևը, իսկ *մի՛ կեր//մի՛ ուտի(ր)* տարբերակներից առաջինին նախապատվություն է տվել հարցվածների **99** տոկոսը: Այսպիսով՝ **ուտել** բայի դեպքում արգելական հրամայականի համար ունենք արդեն իսկ ամրակայված *մի՛ կեր* և *մի՛ կերեք* կազմությունները: *Մի՛ ուտի, մի՛ ուտիր, մի՛ ուտեք* ձևերը, որոնք իբրև զուգածություններ են արձանագրված կանոնակարգման գրեթե բոլոր աղբյուրներում, ակնհայտորեն հնացած են և գործածությունից դուրս են ընկել:

**Բացել:** Առանձին ուսումնասիրություններում այս բայի համար որպես սկզբնաձև է նշվում **ա** խոնարհման **բանալ** ներածանցավոր բայը: Իսկ «զուգահեռ կազմված» **բացել** բայը դիտվում է որպես կանոնավոր բայ<sup>6</sup>: Նոր ժամանակներում, սակայն, ուսումնասիրողները որոշ վերապահությամբ են խոսում **բանալ** բայի սկզբնաձև լինելու մասին և ավանդույթի ուժով ներկայացնելով այն իբրև ներածանցավոր անկանոն բայ, այնուամենայնիվ, հավելում են կարծիք կենդանի գրական լեզվում նրա ոչ գործածական լինելու և խոնարհված ձևերում **բացել** բայի համապատասխան ձևերով փոխարինվելու

<sup>6</sup> Տե՛ս «ժամանակակից հայոց լեզու», հ. 2, եր., 1974, էջ 428:

վերաբերյալ: Ավարտելով **բանալ** բայի շեղումների և անկանոնությունների վերաբերյալ իր խոսքը՝ Ա. Մարգարյանը գրում է. «Նկատելի է, որ ժամանակակից հայոց լեզվում ներկայումս **բանալ** բայի փոխարեն գերազանցապես ինքնուրույն բառային-բառույթային արժեք ստացած ոչ միայն **բացել**, այլև **բաց անել** հարադրավոր բայն է գործածվում»<sup>7</sup>: Մ. Ասատրյանը երեք տասնամյակ առաջ հրատարակած իր քերականության դասագրքում **բանալ**-ը չի քննարկում անկանոն բայերի շարքում, իսկ դրան փոխարինող **բացել** բայը (**բառնալ**-ին փոխարինող **բարձել** բայի հետ) համարում է կանոնավոր: «Որոշ քերականներ,- գրում է նա,- դրանց (նկատի ունի **ա** խոնարհման սոսկածանցավոր անկանոն բայերը- Յու. Ա.) մեջ են զետեղում նաև **բանալ** և **բառնալ** բայերը, բայց դրանք ժամանակակից լեզվում փոխարինվելով **բացել** և **բարձել** ձևերով՝ վերածվում են կանոնավոր բայերի»<sup>8</sup>: **Բառնալ**-ին փոխարինելու եկող **բարձել**-ը, ինչպես նշում է լեզվաբանը, իրոք, կանոնավոր աններածանց բայ է: Սակայն **բացել**-ը ունի անկանոնություններ, ինչպես ստորև կտեսնենք: Մեր դիտարկմամբ ևս **բանալ** սկզբնաձևը գործածությունից արդեն դուրս է եկել և հնացած է: Ունենք **բացել** աններածանց սկզբնաձևը, որը խոնարհման հարացույցում, ինչպես ասացինք, դրսևորում է որոշ անկանոնություններ: Վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայները կանոնավոր են՝ **բացել, բացած, բացող**: Հետևաբար վաղակատարով բաղադրված ժամանակաձևերը՝ **բացել են, բացել ենք** և այլն, չպետք է համարել շեղում կամ անկանոնություն, ինչպես ներկայացվում է որոշ աղբյուրներում: Անցյալ կատարյալը ունի ցոյական և արմատական հիմքերից կազմված զուգաձևեր՝ **բացեցի//բացի, բացեցիր//բացիր, բացեց, բացեցինք//բացինք, բացեցիք//բացիք, բացեցին//բացին**: Երկրորդները ունեն խոսակցական երանգ: Հրամայականի ձևերն են՝ **բա՛ց//բացի՛ր, բացե՛ք, մի՛ բաց//մի՛ բացիր, մի՛ բացեք**: Անկանոնություններ են անցյալ կատարյալի՝ արմատական հիմքից կազմված ձևերը՝ **բացի, բացիր** և այլն, ինչպես նաև հրամայականի **բա՛ց, մի՛ բաց** կազմությունները: Անկանոնություն է նաև այն, որ հոգնակի հրամայականում **բացել**-ը չունի զուգաձևություն, ի տարբերություն **ե** խոնարհման կանոնավոր աններածանց բայերի, ինչպես՝ **գրե՛ք//գրեցե՛ք**, բայց՝ **բացե՛ք**: Արգելական հրամայականի՝ ներկայի հիմքից կազմվող ձևերը՝ **մի՛ բանա(ր), մի՛ բանաք**, որոնք իբրև զուգաձևեր նշվում են կանոնական քերականության դասագրքերում<sup>9</sup>, ինչպես դրանց **բանալ** սկզբնաձևը, հնացած են և, ըստ հարցման արդյունքների, գրական լեզվում գործառույթ չունեն:

**Ե** խոնարհման **ն** սոսկածանց ունեցող բայեր՝ **անել, առնել, դնել, ելնել, թողնել, լինել, տանել, տեսնել**:

Այս բայերի զուգաձևերի գործածականությունը վերաբերող հիմնական խնդիրը առնչվում է արգելական հրամայականի կազմությանը: Ինչպես կանոնավոր բայերի դեպքում, դասագրքերում և այլուր իբրև գործածվող և նույնիսկ նախընտրելի տարբերակներ են արձանագրվում ներկայի հիմքից ձևերը՝ **մի՛ անիր, մի՛ առնիր, մի՛ տանիր, մի՛ անեք, մի՛ առնեք** և

<sup>7</sup> Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 472:

<sup>8</sup> Մ. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզու, Եր., 1983, էջ 348:

<sup>9</sup> Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, էջ 428:

այլն: Մեր դիտարկումները բոլորովին այլ արդյունք են ցույց տալիս: Նշված բոլոր բայերի դեպքում էլ բացարձակ գերակշռությամբ (շեղումները՝ 2-3 %) գործածական են անցյալի հիմքից կազմությունները՝ մի՛ արա, մի՛ արեք, մի՛ դիր, մի՛ դրեք, մի՛ առ, մի՛ առեք, մի՛ թող, մի՛ թողեք, մի՛ ելիր, մի՛ ելեք, մի՛ եղիր, մի՛ եղեք, մի՛ տես, մի՛ տեսեք, մի՛ տար, մի՛ տարեք և այլն: Դրանց զուգահեռ ձևերը՝ մի՛ անիր, մի՛ անեք, մի՛ դնիր, մի՛ դնեք և այլն, ըստ հարցման տվյալների և գրավոր գրական լեզվից քաղված օրինակների, հնաբանությունների արժեք ունեն և դասագրքերում պիտի արձանագրվեն իբրև այդպիսիք: Հարցի ուսումնասիրության մեջ նկատվում է նաև որոշ անհետևողականություն: Նույն տիպի կազմությունների մի մասը համարվում է հնացած՝ մի՛ տեսնիր և մի՛ անիր, մյուսները՝ գործածական, ինչպես՝ մի՛ թողնիր, մի՛ ելնիր, մի՛ դնիր<sup>10</sup>: Այստեղ, հավանաբար, մի դեպքում գործում է կենդանի գրական լեզվից բխող լեզվական զգացողությունը, մյուս դեպքում իշխում է ավանդույթի ուժը:

Ինչ վերաբերում է **ելնել** բայի *ել//ելիր, մի՛ ել//մի՛ ելիր* կազմություններին, ապա պետք է նկատել, որ դրական ձևերում բացարձակ գերակշռությունը տրված է **ել**-ին՝ **7:1** հարաբերությամբ, արգելականի դեպքում **4:1** հարաբերությամբ նախապատվությունը տրվում է *մի՛ ել*-ին: Ուստի նշված կազմությունները՝ *ել//ելիր, մի՛ ել//մի՛ ելիր*, կարելի է արձանագրել որպես զուգաձևեր՝ նախընտրելի համարելով, իհարկե, առաջին՝ *ել, մի՛ ել* ձևերը:

#### **Ա** խոնարհման աններածանց բայեր՝ **գալ, լալ, տալ**:

Ինչպես **ա** խոնարհման կանոնավոր աններածանց բայերի դեպքում, այնպես էլ այս բայերի հոգնակի արգելականի՝ ներկայի հիմքից զուգաձևերը՝ *մի՛ գաք, մի՛ լաք, մի՛ տաք*, որ իբրև գործածական ձևեր են նշվում շատ հետազոտողների կողմից, ըստ մեր ուսումնասիրության արդյունքների, դուրս են մղված գրական լեզվից, անգործածական են. հարցված **60** հոգուց և ոչ մեկը դրանցից որևէ մեկը չի նշում որպես իր կողմից գրավոր կամ բանավոր խոսքում գործածվող տարբերակ: **Գալ** և **լալ** բայերի համար իբրև եզակի արգելականի կազմություններ նշվող ձևերը՝ *մի՛ գար, մի՛ լար*, մեր հարցաթերթիկում որևէ կերպ չեն նշվում որպես գործածվող ձևեր և ունեն գործածության **0** գործակից<sup>11</sup>:

Նշված բայերի մյուս ձևերի վերաբերյալ, ըստ մեր հետազոտության, կարող ենք ասել հետևյալը:

**Գալ** բայի դեպքում եզակի արգելականի *մի՛ գա, մի՛ լա* ձևերը աննշան բացառություններով մատնանշվում են իբրև անգործածական կազմություններ (*մի՛ տա*-ն համապատասխան ուսումնասիրություններում, որպես կանոն, արդեն իսկ հիշատակվում է բարբառային կամ գործածությունից դուրս եկած ձև<sup>12</sup>): **Գալ** բայի՝ տարարմատությամբ կազմված **ե՛լ**

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 469-473:

<sup>11</sup> Հայոց լեզվի ակադեմիական հրատարակության մեջ դրանք նշվում են իբրև միակ (**լալ**-ի դեպքում) կամ իբրև նախընտրելի տարբերակ (տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, էջ 426):

<sup>12</sup> Թեև հակառակ կարծիքն էլ կա. դպրոցական հին դասագրքում այն նշվում է ոչ միայն որպես գործածական, այլև նախընտրելի ձև (տե՛ս **Է. Աղայան, Յ. Բարսեղյան**, Հայոց լեզու: Դասագիրք V-VII դասարանների համար, Եր., 1989, էջ 248):

տարբերակը անհամեմատ քիչ գործածական է, քան խոսակցական երանգ ունեցող **արի՛-ն**: Իսկ արգելականի կազմության մեջ *մի՛ եկ* և *մի՛ արի* տարբերակներից նախապատվությունը միանշանակ տրված է երկրորդին: Գործածական են համարվում նաև *արե՛ք* և *մի՛ արեք* հոգնակիները:

**Լալ** բայի արգելականի *մի՛ լացիր//մի՛ լաց* զուգաձևերից ակնհայտ գերակշռություն ունի առաջինի գործածությունը՝ **5:1** հարաբերությամբ: Կարելի է ենթադրել, որ **Լալ** բայի հրամայականի ամրակայված ձևեր են եզակի թվի համար *լա՛ց* և *մի՛ լացիր//մի՛ լաց*, իսկ հոգնակիի համար՝ *լացե՛ք* և *մի՛ լացեք* կազմությունները: Ընդ որում, **Լալ** բայի բոլոր ձևերն էլ քիչ գործածական են և հաճախ փոխարինվում են **լաց լինել** հարադիր բայի համապատասխան ձևերով՝ *լա՛ց եղիր* և *լաց մի՛ եղիր*, *լա՛ց եղեք* և *լաց մի՛ եղեք*:

**Տալ** բայի՝ անցյալ կատարյալի զուգաձևերը՝ *տվի*, *տվիր*, *տվինք* և այլն, ունեն ընդգծված խոսակցական երանգ և, ի տարբերություն ցոյական հիմքով կազմությունների՝ *տվեցի*, *տվեցիր*, *տվեցինք* և այլն, հատկանշվում են խիստ հազվադեպ կիրառությամբ: Բարբառային կամ հնացած են և գրական լեզվում անգործածական՝ *տվեցե՛ք*, *մի՛ տու*, *մի՛ տա*:

**Ա** խոնարհման սոսկածանցավոր բայեր՝ **դառնալ**, **վեր կենալ**<sup>13</sup>:

**Դառնալ** բայի դեպքում եզակի արգելականում որպես զուգաձևություն արձանագրված *մի՛ դարձիր//մի՛ դառնա* տարբերակներից իբրև գործածական է առանձնացվում առաջինը. հարցվածներից **53-ը** գործածում են այդ կազմությունը, երկրորդը ձեռք է բերել խոսակցական երանգ և աստիճանաբար դուրս է մղվում լեզվից: Հոգնակի արգելական *մի՛ դարձեք//մի՛ դառնաք* զուգաձևերից գործածական է նշվում միայն առաջինը. երկրորդը չի գործածում հարցվածներից և ոչ մեկը: Նշենք, որ պատկերը այսպիսին է նաև **ան** ներածանց ունեցող կանոնավոր բայերի դեպքում. անգործածական են *մի՛ մոռանաք*, *մի՛ խոստանաք* և նման կազմությունները: Կան **դառնալ** բայի նաև անցյալ կատարյալի և հրամայականի ձևեր, որոնք թեև կանոնավոր են, սակայն համարվում են խոսակցական, ոչ գրական՝ *դառա*, *դառար*, *դառավ*, *դառանք*, *դառաք*, *դառան*, *դառիր*, *դառեք*:

**Վեր կենալ** բայի արգելականի զուգաձևերից՝ *մի՛ վեր կաց//մի՛ վեր կենա*, *մի՛ վեր կացեք//մի՛ վեր կենաք*, իբրև գործածվող տարբերակներ են առանձնացվում առաջինները՝ *մի՛ վեր կաց*, *մի՛ վեր կացեք*. հարցվածներից ընդամենը **2-ն** են նախապատվություն տվել **մի՛ վեր կենա** ձևին: **Մի՛ վեր կենաք**-ը որևէ կողմնակից չունի:

**Պակասավոր բայեր**: Այս բայերի զուգահեռ կազմությունների գործածականության տեղաշարժերը և դրանց վերաբերյալ տարակարծությունները առավելապես վերաբերում են արգելական հրամայականի կազմություններին և հավելավոր բայերի առանձին ձևերին:

**Գիտեն** բայի խոնարհման պակասը լրացվում է **իմանալ** ներածանցավոր բայի համապատասխան ձևերով. վաղակատար՝ *իմացել*, հարակա-

<sup>13</sup> Որոշ քերականների կողմից **ա** խոնարհման սոսկածանցավոր բայերի մեջ գերտեղված **բառնալ** բայը, ինչպես վերը նշվեց, ժամանակակից լեզվում փոխարինվել է **բարձել** ձևով, որը կանոնավոր աններածանց բայ է:

տար՝ *իմացած*, ենթակայական՝ *իմացող*, անցյալ կատարյալ՝ *իմացա*, հրամայական՝ *իմացիր*, *իմացեք*, մի՛ *իմացիր*, մի՛ *իմացեք*: **Գիտենալ** բայով համապատասխան կազմությունները՝ *գիտեցել*, *գիտեցած*, *գիտեցող*, *գիտեցա*, *գիտեցիր*, *գիտեցեք*, մի՛ *գիտեցիր*//մի՛ *գիտենա(ր)*, մի՛ *գիտեցեք*//մի՛ *գիտենաք* և այլն, կանոնական են, սակայն աստիճանաբար դուրս են մղվում գրական լեզվից<sup>14</sup>: Մեր հարցման մասնակիցների բացարձակ մեծամասնությունը ընտրել է **իմանալ** բայի խոնարհման ձևերը: **Իմանալ** բայի անկատար ձևաբայը և դրանից կազմված ձևերը՝ *իմանում եմ*, *իմանում ես* և այլն, իրենց հերթին քիչ գործածական են և փոխարինվում են **գիտեն** բայի համապատասխան ձևերով:

**Ցանկալ** բայի հրամայական եղանակի հազվադեպ հանդիպող *ցանկալ*, մի՛ *ցանկա(ր)*, մի՛ *ցանկաք* ձևերը հնացած են և դուրս են արդի գրական լեզվի կանոնից: Մնացած ձևերը լրացվում են **ցանկանալ** բայի համապատասխան ձևերով: Հնացած են և անգործածական նաև **հուսալ** բայի մի՛ *հուսա(ր)*, մի՛ *հուսաք* կազմությունները:

**Լվալ** բայի որոշ ձևեր խոսակցական են. գրական լեզվում դրանք փոխարինվում են **լվանալ** բայի համապատասխան ձևերով՝ *լվանում եմ*, *լվանում էի*: Իր հերթին **լվանալ** բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված կանոնավոր *լվացա*, *լվացար*, *լվացավ*, *լվացանք*, *լվացաք*, *լվացան*, *լվացիր*, մի՛ *լվացիր* ձևերը գործածական չեն և փոխարինվում են **լվալ** բայի *լվացի*, *լվացիր*, *լվաց*, *լվացինք*, *լվացիք*, *լվացին*, *լվա՛* ձևերով: Հրամայականի հոգնակին է՝ *լվացեք*, վաղակատարը՝ *լվացել*, հարակատարը՝ *լվացած*, ենթակայականը՝ *լվացող*: Նույն բայերի արգելականի մի՛ *լվանա* և մի՛ *լվանաք* կազմությունները հարցվածների մեջ աննշան բացառությամբ (մի՛ **լվանա**-ի ընդամենը մեկ գործածությամբ) չունի կողմնակիցներ. գործածվում են և, մեր կարծիքով, կանոնակարգման ենթակա են միայն մի՛ *լվա* և մի՛ *լվացեք* ձևերը:

Ըստ մասնագիտական գրականության՝ գործածական են **կենալ** բայի միայն հրամայական եղանակի մի՛ *կաց*//մի՛ *կենա(ր)*, մի՛ *կացեք*//մի՛ *կենաք* ձևերը: Հանդիպում են նաև *կենում եմ*, *կենալու եմ*, *կենամ*, *կկենամ*, *պիտի կենամ*, *կեցա*, *կեցել եմ*, *կեցած*, *կեցող*, *կենալիս* և նման ձևեր, որոնք խոսակցական են և գրական լեզվում անհանձնարարելի: Մնացած ձևերը լրացվում են **մնալ** բայի համապատասխան կազմություններով<sup>15</sup>: Ըստ մեր հարցման և գրավոր խոսքի համապատասխան նյութի ուսումնասիրության արդյունքների՝ գրական լեզվից աստիճանաբար դուրս են մղվում նաև հիշյալ կազմությունները՝ *կա՛ց*, *կացե՛ք*, մի՛ *կաց* և մի՛ *կենա(ր)*, մի՛ *կացեք* և մի՛ *կենաք*: Դրանք փոխարինվում են **մնալ** բայի համապատասխան ձևերով՝ *մնա՛*, *մնացե՛ք*, մի՛ *մնա*, մի՛ *մնացեք*:

<sup>14</sup> **Գիտենալ**-ը ոմանց կողմից համարվում է անկանոն բայ, քանի որ կանոնավոր ձևերին զուգահեռ իբրև թե ունի նաև հավելավոր անկանոն ձևեր՝ *գիտցած*, *գիտցող*, *գիտցեք*, *գիտցիր* և այլն: Դրանք, սակայն, այսօր հնաբանություններ են, դուրս են մղվել արդի գրական լեզվից:

<sup>15</sup> Հայոց լեզվի նոր դասագրքում իբրև **կենալ** բայի ձևեր են տրված նաև գրաբարյան **կեալ** («ապրել») բայի *կեցցեմ*, *կեցցես*, *կեցցե*, *կեցցենք*, *կեցցեք*, *կեցցեն* ձևերը (տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, **Լ. Խաչատրյան**, Հայոց լեզու, դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար, Եր., 2006, էջ 159), որոնք, սակայն, ներկայումս օգտագործվում են որպես խրախուսական ձայնարկություններ: Դրանք, որպես կանոն, **կենալ** բայի հետ իմաստով չեն կապվում:

**Աղյուսակ ժամանակակից հայերենի անկանոն բայերի խոնարհման համակարգում առկա տեղաշարժերի<sup>16</sup>**

**Սահմանական եղանակ, անցյալ կատարյալ**

Ե խոնարհման աններածանց բայեր՝ **ասել, բերել, զարկել, ուտել, բացել**

ասել	բերել	զարկել	ուտել	բացել(բանալ) <sup>17</sup>
ասացի//ասի	բերեցի//բերի	զարկեցի//զարկի	կերա	բացեցի//բացի
ասացիր//ասիր	բերեցիր//բերիր	զարկեցիր//զարկիր	կերար	բացեցիր//բացիր
ասաց	բերեց	զարկեց	կերավ	բացեց
ասացինք//ասինք	բերեցինք//բերինք	զարկեցինք//զարկինք	կերանք	բացեցինք//բացինք
ասացիք//ասիք	բերեցիք//բերիք	զարկեցիք//զարկիք	կերաք	բացեցիք//բացիք
ասացին	բերեցին//բերին	զարկեցին//զարկին	կերան	բացեցին//բացին

**Հրամայական եղանակ**

**դրական**

ասա՛	բե՛ր	զա՛րկ//զարկի՛ր	կե՛ր	բա՛ց
ասե՛ք//ասացե՛ք	բերե՛ք	զարկե՛ք//զարկեցե՛ք	կերե՛ք	բացե՛ք

**արգելական**

մի՛ ասա	մի՛ բեր	մի՛ զարկիր//մի՛ զարկ	մի՛ կեր	մի՛ բաց//մի՛ բացիր
մի՛ ասեք	մի՛ բերեք	մի՛ զարկեք <sup>18</sup>	(մի՛ ուտի(ր)) մի՛ կերեք (մի՛ ուտեք)	(մի՛ բանա(ր)) մի՛ բացեք (մի՛ բանաք)

**Սահմանական եղանակ, անցյալ կատարյալ**

Ե խոնարհման և սոսկածանց ունեցող բայեր՝ **անել, դնել, թողնել, ելնել, առնել, լինել, տանել, տեսնել**

անել	դնել	թողնել	ելնել	առնել	լինել	տանել	տեսնել
արեցի//արի	դրեցի//դրի	թողեցի//թողի	ելա	առա	եղա	տարա	տեսա
արեցիր//արիր	դրեցիր//դրիր	թողեցիր//թողիր	ելար	առար	եղար	տարար	տեսար
արեց	դրեց	թողեց	ելավ	առավ	եղավ	տարավ	տեսավ
արեցինք//արինք	դրեցինք//դրինք	թողեցինք//թողինք	ելանք	առանք	եղանք	տարանք	տեսանք
արեցիք//արիք	դրեցիք//դրիք	թողեցիք//թողիք	ելաք	առաք	եղաք	տարաք	տեսաք
արեցին//արին	դրեցին//դրին	թողեցին//թողին	ելան	առան	եղան	տարան	տեսան

<sup>16</sup> Ձուգածներից գրական լեզվում ավելի գործածական կազմություններ են առաջինները: Թավ գրվածները խոսակցական կազմություններ են: Փակագծում տրվածները՝ հնացած կամ անգործածական:

<sup>17</sup> Հնացած և անգործածական են նաև բանալ բայի համար իբրև խոնարհման ձևեր նշվող բանամ, բանայի (ըղծ.), կբանամ, կբանայի (ենթ.), պիտի բանամ, պիտի բանայի (հարկադ.) կազմությունները:

<sup>18</sup> **Ձարկել** բայը, ինչպես արդեն ասել ենք, աստիճանաբար իր տեղը զիջում է **խփել**-ին. խոնարհված ձևերը կենդանի լեզվում փոխարինվում են վերջինիս համապատասխան ձևերով՝ **խփում է, խփելու է, խփեց, խփիր, մի՛ խփիր** և այլն:



## Հրամայական եղանակ

### դրական

արա՛	դի՛ր	թո՛ղ	ե՛լ//ելի՛ր	ա՛ռ	եղի՛ր	տա՛ր	տե՛ս
արե՛ք	դրե՛ք	թողե՛ք	ելե՛ք	առե՛ք	եղե՛ք	տարե՛ք	տեսե՛ք

### արգելական

մի՛ արա	մի՛ դիր	մի՛ թող	մի՛ ել//մի՛ ելիր	մի՛ առ	մի՛ եղիր	մի՛ տար	մի՛ տես
(մի՛ անիր)	(մի՛ դնիր)	(մի՛ թողնիր)	(մի՛ ելնիր)	(մի՛ առնիր)	(մի՛ լինիր)	(մի՛ տանիր)	(մի՛ տեսնիր)
մի՛ արեք	մի՛ դրեք	մի՛ թողեք	մի՛ ելեք	մի՛ առեք	մի՛ եղեք	մի՛ տարեք	մի՛ տեսեք
(մի՛ անեք)	(մի՛ դնեք)	(մի՛ թողնեք)	(մի՛ ելնեք)	(մի՛ առնեք)	(մի՛ լինեք)	(մի՛ տանեք)	(մի՛ տեսնեք)

## Սահմանական եղանակ, անցյալ կատարյալ

**Ա** խոնարհման աններածանց բայեր՝ **գալ, լալ, տալ**

**Ա** խոն. սոսկած. բայեր՝ **դառնալ, վեր կենալ**

գալ	լալ	տալ	դառնալ	վեր կենալ
եկա	լացեցի (լացի)	տվեցի//տվի	դարձա (դառա)	վեր կացա
եկար	լացեցիր (լացիր)	տվեցիր//տվիր	դարձար (դառար)	վեր կացար
եկավ	լացեց	տվեց	դարձավ (դառավ)	վեր կացավ
եկանք	լացեցինք (լացինք)	տվեցինք//տվինք	դարձանք (դառանք)	վեր կացանք
եկաք	լացեցիք (լացիք)	տվեցիք//տվիք	դարձաք (դառաք)	վեր կացաք
եկան	լացեցին (լացին)	տվեցին//տվին	դարձան (դառան)	վեր կացան

## Հրամայական եղանակ

### դրական

արի՛/ե՛կ	լա՛ց	տո՛ւր	դարձի՛ր	վե՛ր կաց
եկե՛ք	լացե՛ք	տվե՛ք	դարձե՛ք	վե՛ր կացեք

### արգելական

մի՛ արի//մի՛ եկ	մի՛ լացիր//մի՛ լաց	մի՛ տուր	մի՛ դարձիր	մի՛ վեր կաց
(մի՛ գա)	(մի՛ լա, մի՛ լար)		(մի՛ դառնա)	(մի՛ վեր կենա)
մի՛ եկեք (մի՛ գաք)	մի՛ լացեք (մի՛ լաք)	մի՛ տվեք	մի՛ դարձեք	մի՛ վեր կացեք
		(մի՛ տաք)	(մի՛ դառնաք)	(մի՛ վեր կենաք)

Քննարկվող պակասավոր բայերը (**գիտենմ, լվալ, ցանկալ, հուսալ, կենալ**), որոնց դեպքում տեղաշարժեր են արձանագրվում հրամայականի (**կենալ**-ի դեպքում՝ նաև անցյալ կատարյալի) կազմության մեջ, աղյուսակում ներկայացված չեն, քանի որ դրանց հնացած ձևերը կա՛մ համընկնում են վերը քննարկված ներածանցավոր բայերի անգործածական ձևերին (ինչպես՝ **մի՛ հուսար, մի՛ հուսաք, մի՛ լվաք, մի՛ կենա(ր), մի՛ կենաք**), կա՛մ գրական լեզվի մեջ իրենց տեղը աստիճանաբար զիջում են կամ արդեն զիջել են այլ բայերի՝ **կենալ>մնալ (կա՛ց>մնա՛, կացե՛ք>մնացե՛ք, մի՛ կաց>մի՛ մնա, մի՛ կացեք>մի՛ մնացեք)**: **Գիտենմ** բայի հավելավոր **գիտենալ**-ը գրական լեզվում աստիճանաբար փոխարինվում է **իմանալ**-ով և դրա համապատասխան ձևերով՝ **գիտեցա>իմացա, գիտեցիր>իմացիր, մի՛ գիտեցեք//մի՛ գիտենաք>մի՛ իմացեք** և այլն:

Այսպիսով, անկանոն և պակասավոր բայերի մի շարք կազմություններ, որոնք կանոնական քերականության մեջ ավանդաբար արձանագրված են որպես գործածական ձևեր՝ մի՛ գաք, մի՛ ելնիր, մի՛ ուտիր, մի՛ դնիր, մի՛ առնեք և այլն, ըստ էության, կա՛ն դուրս են մղվում գրական լեզվից, կա՛ն անգործածական դառնալու ճանապարհին են: Դրան հակառակ, մի շարք զուգաձևեր, որոնք մասնագիտական գրականության մեջ երբեմն հիշատակվում են որպես ոչ նախընտրելի կամ քիչ գործածական ձևեր, ինչպես՝ մի՛ արեք, մի՛ առ, մի՛ թողեք, մի՛ եկեք, մի՛ արի և այլն, իրենց գործածականությամբ ամրապնդվում են գրական գրավոր և բանավոր լեզվում: Դրանք միայն զուտ գրական կազմություններ կամ միայն կանոնավոր ձևեր չեն. դրանց մի մասը գրական լեզու է մուտք գործում բանավոր խոսակցական լեզվից, կանոնավոր կամ անկանոն ձևեր են, սակայն իրենց գործածականությամբ և գրական լեզվի օրինաչափություններին իրենց համապատասխանությամբ արդեն իսկ հաստատվել կամ հաստատվում են ժամանակակից գրական լեզվում: Դրանք ենթակա են վերականոնակարգման: Հատուկ ուշադրության է արժանի նաև այն իրողությունը, որ մի շարք բայեր աստիճանաբար փոխարինվում են իրենց բառային-բառույթային հոմանիշներով, ինչպես՝ կենալ>մնալ, գիտենալ>իմանալ, զարկել>խփել:

Ամեն մի մասնակի փոփոխություն կամ լեզվի ամեն տեղաշարժ, հասկանալի է, չի կարող հիմք հանդիսանալ խոսելու տվյալ լեզվում ձևավորվող նոր իրակության կամ լեզվական իրողության նոր որակի մասին: «Միայն այն ժամանակ լեզուն հին որակից նոր որակի է անցնում,- գրում է Ս. Ղազարյանը,- երբ նրա հնչյունաբանության, բառային կազմի ու քերականության նոր որակի հետ կապված տարրերը աստիճանաբար կուտակվելով ու զարգանալով՝ գերակշռում են հին որակի տարրերին և ընդգրկում լեզվի հաղորդակցական ֆունկցիան ժողովրդի զարգացման տվյալ շրջանում իրականացնելու համար անհրաժեշտ լեզվական հիմնական երևույթները»<sup>19</sup>: Ինչպես նկատեցինք, քննարկվող կազմությունները սովորական կամ մասնակի փոփոխություններ չեն, այլ լեզվական նոր ու կայուն որակ: Եվ, ինչպես ցույց են տալիս նաև դիտարկումները, դրանք արդեն իրենց հաստատուն տեղն ունեն ոչ միայն մեր առօրյա-խոսակցական լեզվում, այլև գրական լեզվում: Ահա այդպիսի կազմությունների գործածության օրինակներ գեղարվեստական գրականությունից. «Հայրի՛կ, ինձ մենակ մի՛ թող» (Ա. Այվազյան), «Մի՛ եղեք այդքան փափկասիրտ, դա վտանգավոր հիվանդություն է», «Մի՛ տարեք նրան, նա չի դիմանա», «Մի՛ արա, ի սեր աստծո, մի՛ կործանիր մեզ» (Պ. Ջեյթունցյան), «Հայրեմիք ճամփորդելիս ինչ կուզեք արեք, բայց հայրենասիրություն մի՛ տարեք, այնտեղ այդ ապրանքից կա առատորեն» (Ս. Կապուտիկյան):

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք ասել, որ ժամանակակից հայերենի բայի խոնարհման համակարգում առկա են զգալի տեղաշարժեր. կենդանի գրական լեզվում և գրական գրավոր խոսքում գործածական են դառնում նոր կազմություններ: Դրանք արձանագրվում են նաև անկանոն և պակասավոր բայերի խոնարհման հարացույցում: Այդ տեղաշարժերը՝ որպես գրական լեզվում ամրապնդվող տարրեր, պետք է արձանագրվեն նորմատիվ քերականության դասագրքերում և համապատասխան գիտական գրականության մեջ:

<sup>19</sup> Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006, էջ 16-17:

**ЮРИЙ АВETИСЯН – *Сдвиги в системе спряжения неправильных и неполных глаголов современного армянского языка.*** – В системе глагольного спряжения в современном армянском языке наблюдаются существенные сдвиги. В живом литературном языке и в письменной литературной речи входят в употребление новые образования. Они присутствуют также в парадигме спряжений неправильных и неполных глаголов. Эти сдвиги как нормативные элементы, закрепляющиеся в литературном языке, следует зафиксировать в учебниках нормативной грамматики и в соответствующей научной литературе.

**YURI AVETISYAN – *Shifts in the System of Conjugation of Irregular and Defective Verbs of Modern Armenian Language.*** – Essential shifts are observed in the system of verbal conjugation in modern Armenian language. In a living literary language and in written literary speech new structures come into use. They are also present in the paradigm of conjugation of irregular and defective verbs. These shifts should be registered in textbooks of normative grammar and corresponding scientific literature as standard elements fixed in literary language.